ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ՝ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արտուր Մովսիսյան, Անի Վիրաբյան, Արփինե Առաքելյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության պետ, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի ավագ մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս, մայիսի 26-ից 29-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Արևելյան գործընկերության (ԱլԳ) հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի հերթական 6-րդ հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

1. Հետազոտությունների և նորարարության ոլորտներում ԱլԳ շրջանակում իրականացված աշխատանքները և միջազգային համագործակցության զարգացման հեռանկարները,
2. ԱլԳ առաջնահերթությունները հետազոտությունների և նորարարության ոլորտներում, ինչպես նաև ԱլԳ երկրներում իրականացվող բարեփոխումներն ու առկա մարտահրավերները,
3. ԱլԳ երկրների մասնակցությունը ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների շրջանակային ծրագրին,

4. Եվրոպական հետազոտական տարածքում միջազգային համագործակցության արժեքներն ու սկզբունքները,
5. Եվրոպական հետազոտական տարածքի ուղղությունների՝ Բաց գիտության, Հետազոտությունների գնահատման, Հետազոտական կարիերայի և Հետազոտական ենթակառուցվածքների արդիականացման շրջանակում ընթացող աշխատանքների քննարկում,
6. Ընթացիկ այլ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Արտուր Մովսիսյանը ներկայացրել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող բարեփոխումները, բարձրագույն կրթության և գիտության ոլորտների զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագիրը, ՀՀ գիտական կազմակերպություններում գիտական կադրերի տարակարգը և չափանիշները, տվյալ տարակարգը հայցող գիտական կադրերին ներկայացվող քանակական և որակական նվազագույն պահանջները, ինչպես նաև ՀՀ գիտական համայնքի՝ Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն ուղղված քայլերը: Ա. Մովսիսյանը նշել է նաև, որ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գրեթե բոլոր դրամաշնորհային մրցույթներում պարտադիր պայման է գիտական խմբում արտասահմանյան գործընկերոջ ներգրավվածությունը: Հեռավար լաբորատորիաների հիմնադրում, Արտերկրի գիտնականների ինտեգրում, «PostDoc», Առաջատար հետազոտությունների աջակցություն, Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության մրցույթները համապատասխանում են ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում իրականացվող մրցույթների չափանիշներին և բաց են օտարերկրյա հետազոտողների համար:

Ա. Մովսիսյանը ներկայացրել է «Ակադեմիական քաղաք» նախագիծը, որի նպատակն է ստեղծել ժամանակակից կրթական, հետազոտական և նորարարական գործունեությունը երաշխավորող միջավայր:

Անդրադարձ է կատարվել նաև գիտության ոլորտում ֆինանսավորման բարձրացմանը, որի հետևանքով բազային ծրագրերում ներառված գիտական աշխատողների քանակն ավելացել է: Նշվել է նաև, որ գիտական և

գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատողների ընդհանուր թվի կեսից ավելին կանայք են:

Անի Վիրաբյանը մասնակցել է ԱլԳ անդամ երկրներում հետազոտությունների և նորարարության ոլորտներում իրականացվող բարեփոխումների, ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում ԱլԳ անդամ երկրների մասնակցության ակտիվացմանն ուղղված քայլերի քննարկմանը:

Արփինե Առաքելյանը ներկայացրել է Հետազոտական ենթակառուցվածքների արդիականացման շրջանակում գիտական կենտրոնները ժամանակակից սարքերով վերազինելու ծրագրերը՝ համաձայն որի 2023 թվականից յուրաքանչյուր տարի առնվազն 10 մլն եվրո հատկացվում է խոշոր և եզակի գիտական սարքերի գնմանը, ևս 2 մլն եվրո տարեկան ուղղվում է փոքր գիտական սարքավորումների կամ նյութերի ձեռքբերմանը:

Ա. Մովսիսյանը, Ա. Վիրաբյանը և Ա. Առաքելյանը հանդիպումներ են ունեցել ԱլԳ անդամ երկրների և Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ:

Գործուղման շրջանակում այցելություններ են տեղի ունեցել Լիտվայի Հետազոտական խորհուրդ և Կյանքի մասին գիտությունների կենտրոն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ԱլԳ անդամ երկրների և Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում ընդունվել են ոչ պաշտոնական աշխատանքային խմբի հերթական 6-րդ հանդիպման գործառնական եզրակացությունները:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ շարունակելու աշխատանքային շփումները և պարբերաբար իրազեկելու իրականացվող ծրագրերի ընթացքի մասին:

Որոշվել է Արևելյան գործընկերության հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի հերթական 7-րդ հանդիպումը անցկացնել 2025 թվականի գարնանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արտուր Մովսիսյան
03.06.2024թ.